Եղեռնում նահատակված մորս՝
Ոսկեհատի հիշատակին

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ



Ծնվել եմ 1899 թ., Տրապիզոնին մերձակա Կյուշանա համշենահայ գյուղում։ Տեղի վեցամյա զպրոցն ավարտելուց հետո, ուսումս շարունակել եմ Տրապիզոնի Սահակ-Մեսրոպյան ութամյա վարժարանում, որի վերջին շրջանավարտներից եմ (1914 թ.)։ Լուսաշող Ոսկեհատ մայրիկիս հորդորներով ու աջակցությամբ, խույս տալով 1915թ. Մեծ եղեռնից, ընդգրկվեցի լեռներում ապաստանած հայդուկային խմբերում։ Շուրջ մեկ տարի, հաճախակի ընդհարվելով թուրքական կանոնավոր և բաշիբոզուկ զինված ուժերի հետ, շատերս փրկվեցինք ռուսական հսկողական բանակի՝ Տրապիզոնը գրավելու (1916 թ., ապրիլ) շնորհիվ։ Մինչ սուսական բանակի ետ քաշվելը (1918 թ. հունվար), եղեռնից մազապուրծ եղած սակավաթիվ բեկորներս վերաբնակվեցինք քարուքանդ եղած մեր բնակավայրերում։ Մեր բազմամարդ գերդաստանից փրկվեցինք միայն ես՝ լեռներում ապաստանելով, և հորեղբորս որդին, որը, նախքան մղձավանջային արհավիրքը, ապաստանել էր Ռուսաստանում։

1918 թ. գարնանից, վերաբնակություն հաստատելով Սոչիի շրջանում, մինչև կենսաթոշակի անցնելս (1959 թ.), աշխատել եմ որպես ուսուցիչ, ծխախոտագործների շրջանային միության վարչության նախագահ, 1927—1929 թթ. վերապատրաստվելով ծխախոտագործների գյուղատնտեսական բարձրագույն դասընթացներում (Մոսկվա), շարունակել եմ աշխատել գյուղատնտեսության հետ կապված համապատասխան հիմնարկներում։

Կենսաթոշակի անցնելուց հետո ամբողջովին լծվել եմ դեռևս երիտասարդ տարիներից փայփայած նվիրական նպատակիս՝ համշենահայության ոդիսականի պատմության, տնտեսական զբաղմունքների, նյութական ու հոգևոր մշակույթի, նիստուկացի, սովորույթների, ժողովրդական բանահյուսության* վերաբերյալ դաշտային նյութերի հավաքման, դասակարգման ու շարադրման գործին։ Անմիջականորեն գտնվելով համշենահայության վերապրած սերունդների շրջապատում և մոտիկից ծանոթ լինելով նրա բառ ու բանին, բնակավայր առ բնակավայր շրջել, հանդիպել ու նյութեր եմ հավաքել Սև ծովի կովկասյան ափերում և Կրասնոդարի երկրամասում հանգրվանած իմ հայրենակիցների ավագ ու միջին սերնդի ավելի քան երկուհարյուր լավատեղյակ ներկայացուցիչներից։ Հիմնականում բանավոր, բայց և հավաստի հաղորդումների հիման վրա շարադրված սույն աշխատությունն արդասիք է շուրջ քսան տարվա իմ հավաքչական անդադրում պրպտումների։

Տեղագրությունն ու բնակչության թվաքանակն առավել հավաստի դարձնելու նպատակով համեմատել, ճշգրտել ու դասակարգել եմ տեղագրական ու վիճակագրական ավյալներ հաղորդած

* Բանահյուսական նյութերը գտնվում են ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվում։

սացողների նյութերը, նկարագրել համշենահայ յուրաքանչյուր ընակավայրի տեղագրությունը և նրանում ապրող հիմնական գերդասանները, ինչպես նաև՝ հարեան կամ գրկից թուրքերի, հույների, աջարացիների ու լազերի ընակավայրերի կամ թաղերի տեղագրությունը։

Ժողովուրդների անշահախնդիր բարեկամությունը և նրանց խաղաղասիրական, մարդասիրական ու արդարամիտ ձգտումներն ընդգծելու նպատակով, բազմաթիվ ու հուզիչ դեպքերից ներկայացրել եմ թուրքական գավագիր իշխանությունների ու կրոնամոլ խառնամբոխի աղդասպան վայրագություններին բացահայտ կամ դագտնի ընդդիմացող, պայքարող թուրք, աջար, քուրդ, լազ և հույն ժողովուրդների բարյացակամ ու անձնազոհ վերաբերմունքի դրվագներ՝ անդեն ու անպաշտպան համշենահայության նկատմամբ։ Նրանք, հաճախ անտեսելով իշխանությունների կողմից մեղադրվելու և դաժանորեն պատժվելու վանկը, պաշտպան էին կանգնում, իրենց ընակավայրերում, տներում թաքցնում, ապաստան էին տալիս հայ մանուկներին, կանանց ու ծերերին, կենքով ու կենսամթերքով օգնում էին լեռներում ու անտառներում ապաստանած հայդուկային-պարտիզանական հայկական խմբերին։

Համշենահայության աղդագրական ու բանահյուսական նյութերը հնարավորին չափ համապարփակ ու ըստ արժանվույն հավաքելու և դասակարգելու երկարատև ժամանակամիջոցում, ինչպես նաև իմ հեղինակությամբ մի շարք հոդվածներ ու հաղորդումներ գիտական պարբերականներում հրատարակելու ասպարեղում, ծերունաղարդ, բայց գիտության մեջ սկսնակիս մշտապես գիտամեթոդական ու նյութական գործուն օգնություն են ցույց տվել ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և աղդագրության ինստիտուտի դիրեկցիան և, առանձնապես, ինստիտուտի աղդագրության բաժինը, որի անմիջական ղեկավարությամբ էլ աշխատում եմ առ այսօր և, որի համար, օգտվելով առիթից, հայանում եմ իմ և հայրենակիցներիս խորին շնորհակալությունը։ Պարտքս եմ համարում նշելու նաև իմ որդիներ Յոլակ ու Վարուժան Թոռլաքյաններին և բարեհիշատակ ընկերոջս որդի Վրույր Երվանդի Դավլաշյանին, առանց որոնց բարոյական և նյութական աջակցության անհնար կլիներ աղդագրական ու բանահյուսական նյութեր հավաքելու նպատակով իմ բաղմամյա շրջագայություններն ու այս գործի իրականացումը։

Ամենեին էլ չհավակնելով ներկայացվող աշխատության անթերի լինելուն, գոհունակությամբ կընդունեմ ընթերցող հասարակության և, հատկապես, լավատեղյակ հայրենակիցներիս առաջարկությունները, լրացումներն ու դիտողությունները։